

«ՀԱՒԱՍԱՐՈՒՄ ԲԱԶՄԱԹԻՒ ԱՆՅԱՅՏՆԵՐՈՎ» (EQUATION WITH MULTIPLE UNKNOWNNS)

Վերջերս շատ յաճախ կը յիշեմ արծակագիր Վարդգէս Պետրոսեանի մէկ գիրքին վերոյիշեալ վերնագիրը, երբ մտորեմ լիբանանեան ներկայ կացութեան մասին:

Թերեւս միայն քաղաքացիական պատերազմի «տաք» տարիներու շրջանաւարտները այսքան արկածախնդրական եւ անորոշ օրեր ապրած են: Վաղը դպրոց կայ, թէ չկայ, դիմկը բաց է, թէ գոց է, Պաքալորեայ պիտի ըլլայ, թէ պիտի չըլլայ, տղարը այսօր «քանի՞ն ելաւ», դասերը «օնլայն» պիտի շարունակուին, թէ Սեպտեմբերին դպրոց պիտի բանանք...:

Ռինկը գոցուեցաւ ու բացուեցաւ, յուրախութիւն աշակերտներուն՝ Պաքալորեան ջնջուեցաւ, Քորոնան եկաւ ու... մնաց, դպրոցը փակուեցաւ ու չբացուեցաւ, տղարը բարձրացաւ ու... դեռ կը բարձրանայ, առցանց ուսումնառութիւնը իր ներկայութիւնը աւելի ամուր կը հաստատէ...:

Եւ այսպէս եկաւ Յունիսը: Ինչէր ծրագրած էինք, ինչ եղաւ...

Եղաւ այն, որ 15 տարի դպրոց գալէ ետք, 11 աշակերտներ աւարտեցին դպրոցը՝ յետաձգուած ամաւերջի հանդէսով: Հոգաբարձութիւնը ընդառաջեց շրջանաւարտներու փափաքին եւ խոստացաւ շենք-շնորհքով ամաւերջի հանդէս կազմակերպել, երբ որ առողջապահական պայմանները բարելաւուին:

Չսպասելով Սեպտեմբերին, «Լրատու»-ի այս թիւը կը նուիրենք մեր սիրելի շրջանաւարտներուն, մաղթելով անոնց որ այս դժուար տարին դառնայ հեռաւոր յուշ, եւ այս փորձառութեամբ իմաստնացած ու զօրացած՝ անոնք բարձրագոյն ուսման տիրանան ու մտնեն գործի ասպարէզ, իրենց կեանքի «հաւասարում»-ներուն մէջ գոյացող ու գոյանալիք անյայտները փոխարինելով Հաւատքով, Յոյսով եւ Սէրով, որպէսզի ամէն անորոշութիւն պարզուի, խաւարը փարատի եւ երկնային լոյսը պայծառացնէ իրենց ճամբան դէպի ապագայ...

Երթաք բարով, սիրելի աղջիկներ եւ տղաք: Աստուած հետերնիդ...

ԱՐՄԵՆ ԻՐՆԵՇԵԱՆ









Գործ՝ 3. ԱՅՎԱԶՈՎՍԿԻԻ

ՏՈՔԹ. ՆԱԶԱՐԷԹ ՏԱՐԱՔՃԵԱՆԻ ՆՈՒԻՐԱՏԻՈՒԹԻՒՆԸ ՀԱՅ ԱՌԵՏԱՐԱՆԱԿԱՆ ԳՈԼԷՃԻՆ

Հնորհակալութեամբ ստացանք 1970-ի շրջանաւարտ, Ամերիկայի հայ աւետարանչական ընկերակցութեան նախագահ, ակնաբոյժ տոքթ. Նազարէթ Տարաքճեանէն 7000 տոլար, որուն 5000-ը իր 2019-2020 տարեշրջանի տարեկան յատկացումն է, իսկ 2000-ը՝ «Դոկտ. Զաւէն Մարդեան կրթական ֆոնտ»-ին նուիրատութիւն:

ՄԵՐ ՇՐՋԱՆԱԲԱՐՏՆԵՐԸ



**12-րդ ԴԱՍԱՐԱՆԻ
ՇՐՋԱՆԱԲԱՐՏՆԵՐ**

6-րդ դասարանի ընթացակարներ



Աղաճեան Գեորգ
Գրիգորեան Արսս
Կարսդեան Ալիք
Կիրակոսեան Պետրոս

Ճոշիկեան Զրիսթան
Միքայելեան Վահէ
Մանսսա Մերի-Լիսի



Սարգիսեան Լիանա
Սպաճեան Անթելինա
Տեսուխեան Անտրես
Ֆրանսիս Նոնեսի

ՄԱՆԿԱԴԱՐՏԵԶԻ ԸՆԹԱՑԱԿԱՐՆԵՐ



Արմաշանեան Էնթի
Գոլանճեան Սերենա
Գոնթոխեան Կարգիլլա
Ժամսկոյեան Յոզանա



Կորբուրեան Վրէժ
Հաւսոյի Երիշարսեան
Միքայելեան Էստաբոյիլ
Նասիթ Թամարա




Նոնրա Սոֆի
ԱՆ Սաւոյի Հոնսա
Տարսաճեան Սիւթիա
Ֆերսանեան Արիւ

📌 ՀԱԳ-ի 11-րդ դասարանի ընկերատնտեսական բաժանմունքի երեք աշակերտուհիներ՝ Արզումանեան Այգ, Գեորգեան Լիա եւ Պաստաճեան Նարինե, իրենց ուսուցիչին՝ պր. Հրայր Տանակեօգեանի խորհուրդով եւ քաջալերանքով, առողջապահական մեկուսացումի շրջանի իրենց ազատ ժամանակը օգտակար ձեւերով անցընելու նպատակով, մասնակցած են հաշուապահութեան հիմունքներու առցանց դասընթացքի մը եւ յանձնելով համապատասխան քննութիւն՝ արժանացած են Corporate Finance Institute-ի վկայականին:



Կը գնահատենք մեր աշակերտուհիներուն եւ իրենց ուսուցիչին նախաձեռնութիւնը եւ կը շնորհաւորենք զիրենք այս առթիւ:

📌 ՀԱԳ-ի 8-րդ դասարանի աշակերտուհի Արմինէ Զեչիշեան մասնակցելով «Եւրոպական միութիւնը կլիմայի համար» պաստառներու պատրաստութեան մրցանքին, որ կազմակերպուած էր Հայաստանի մէջ, շահած է առաջնութիւն եւ պարգեւատրուած է մրցանակներով:



Կը շնորհաւորենք մեր շնորհալի աշակերտուհիին այս յաղթանակը:

Յարգարծան

Գալուստ Կիլպէնկեան Հիմնարկութեան Հայկական Բաժանմունքին անունով, կ'ուզեմ շնորհակալութիւն յայտնել ձեզ՝ «Հայերէնով դասաւանդողներու առցանց ուսուցումի մրցանակ»ին ձեր մասնակցութեան համար եւ ուրախութեամբ կը յայտնեմ, որ մեզի ներկայացուած համացանցային ձեր նախաձեռնութիւնը դրականօրէն գնահատուեցաւ եւ կ'արժանանայ քաջալերական մրցանակի մը (500 USD):

Այս մրցանակը մշակուած է քաջալերելու հայերէնով դասաւանդող այն ուսուցիչներուն անհատական քանքերը, որոնք ներկայ պայմաններուն մէջ, իրենց դասաւանդումը պարտադրաբար առցանց հարթակներ տեղափոխած են, եւ չ'ենթադրեր ներկայացուած նիւթերուն հաստատումը կամ վաւերացումը Գալուստ Կիլպէնկեան Հիմնարկութեան կողմէ:

Կը շնորհաւորեմ ձեզ եւ յաջողութիւն կը մաղթեմ մանկավարժութեան ծիրէն ներս ձեր բոլոր աշխատանքներուն:

Յարգանք՝
Պաշտօնէջ Բաժնետէտ
 Ռազմիկ Փանոսեան
 Տնօրէն,
 Գալուստ Կիլպէնկեան Հիմնարկութեան Հայկական Բաժանմունք

📌 ՀԱԳ-ի հայերէնի եւ հայ գրականութեան ուսուցչուհիներ տիկին Անի Պիլալեան եւ օրիորդ Վարդուկ Ֆռնըզլեան արժանացած են Գալուստ Կիլպէնկեան հիմնարկութեան հայկական բաժանմունքի «Հայերէնով դասաւանդողներու առցանց ուսուցումի մրցանակին», Հիմնարկութենէն ստանալով 500-ական տոլար պարգեւ եւ շնորհաւորագիր:

Կը շնորհաւորենք մեր ուսուցչուհիները:



ՀԱԳ Աշակերտական խորհուրդին նախաձեռնութեամբ սկսած է գործել դպրոցի Instagram-ի էջը:

Հետեւեցէք մեզի aecollege էջին միջոցաւ:

<https://www.instagram.com/aecollege/>



ՀԵՏԵԻՑԵԸ ԴՊՐՈՑԻ ԱՌՑԱՆՑ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹԻՒՆՆԵՐՈՒՆ ԵՒ ՆՈՐՈՒԹԻՒՆՆԵՐՈՒՆ FACEBOOK-Ի ARMENIAN EVANGELICAL COLLEGE ԷՋԵՆ:

<https://www.facebook.com/aecollege.lb/>

➤ Յունիս 2020-ին լոյս տ ե ս ա ծ Համագգային մշակութային ընկերակցութեան «Բ ա գ ի ն» գրական պարբերականի ԾԸ. տարի թիւ 3-4-ը (Յուլիս-Դեկտեմբեր 2019) նուիրուած է ՀԱԳ-ի 1966-ի շրջանաւարտուհի, բանաստեղծ եւ արձակագիր



Վեհանոյշ Թէքեանի: «Բագին»-ի այս բացառիկ թիւին մէջ Թէքեանէն կան ութ գրութիւններ եւ բազմաթիւ այլ գրութիւններ՝ անոր մասին:

➤ 23 Մայիս 2020-ին ՀՅԴ Գանատայի կեդր. կոմիտէն յայտարարեց կազմութիւնը Լիբանանահայութեան օժանդակութեան Գանատայի մարմինին, որուն ատենապետն է 1974-ի շրջանաւարտ Նորայր



Պէրպէրեան: Ան Թորոնթոյի «Նոր հայ հորիզոն» յայտագրին ընթացքին ներկայացուց Լիբանանի մէջ տիրող կացութիւնը եւ նշեց անհրաժեշտութիւնը լիբանանահայութեան օգնելու:

➤ Մայիս 2020-ին տուպայաբընակ տէր եւ տիկին Յարութիւն

եւ Սիլվա (1971-ի շրջանաւարտուհի) Սթամպուլի Լիբանանի հայոց թեմի ազգ. առաջնորդարանին միջոցով 100 միլիոն լ.ո. նուիրեցին բաժնելու հաւասարակէս Բորոնայի ճգնաժամային շտաբին, ԼՕԽ-ին, ՀԲԸՄ-ին եւ Ազգային առաջնորդարանին:

➤ Կազմակերպութեամբ Նիւ Եորքի Թէքեան մշակութային միութեան, 1 Մարտ 2020-ին Նիւ Եորքի «Միմֆոնի սիէյս»-ին մէջ ներկայացուեցաւ Շարլ Ազնաւուրի ստեղծագործական կեանքի բեմականացումը: ԹՄՄ-ի Նիւ Եորքի մասնաճիւղի ատենապետուհին՝ 1985-ի շրջանաւարտուհի տիկ. Հիլտա Քիրէճեան-Յարութիւնեան, ո՛չ մէկ ջանք խնայած էր ապահովելու այս եզակի ձեռնարկին յաջողութիւնը:

➤ ՀԱԳ-ի նախկին աշակերտ, Լիբանանի ֆիլիարմոնիք նուագախումբի ղեկավար մայեսթրօ Յարութ Ֆազլեան, Պաալպէքի



փառատօնի ծիրէն ներս 5 Յունիս 2020-ին Պաալպէքի Բաքուի տաճարին մէջ ղեկավարեց «Դիմադրութեան ձայնը» խորագրեալ մեծապէս տպաւորիչ համերգը, որ 24 ժամուան մէջ ունեցաւ անելի քան եօթ միլիոն հետեւորդ:

➤ «Դիմադրութեան ձայնը» համերգին մասնակիցներէն էր նաեւ 2003 թ. շրջանաւարտ տիկ. Շուշան Արթինեան-Թորքաթեան (թաւ ջութակ):

Մ Ա Հ

† ՀԱԳ-ի նախկին աշակերտ (1971 – 1974) Վարուժան Դարբինեան (1957 – 2020) մահացած է Փորթլենտի մէջ, Օրէկըն, ԱՄՆ, 14 Յունիս 2020-ին, փարքինսընգ հիւանդութեան հետեւանքով:

† ՀԱԳ-ի նախկին աշակերտ (1967-1974) Բիւզանդ Զերպալեան (1960 – 2020) մահացած է Օսթարիոյ մէջ, Գանատա, Ապրիլ ամսուն, յետ կարճապահ հիւանդութեան:



ՄԵՐ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԱԿԱՆ

ՇՐՋԱՆԱԴԱՐՏՆԵՐԸ

— 2020 —

- **ԼԵՒՈՆ ՊԱՊԻԿԵԱՆ** (2016-ի շրջ.) AUB BA in “Media and Communication”
- **ՄԱՐԻՆԱ ՊԱՅՐԱԳՏԱՐԵԱՆ** (2015-ի շրջ.) LIU BBA in “Finance”
- **ՍԱՌԱ ԶԻԼԻՆԿԻՐԵԱՆ** (2015-ի շրջ.) LAU BArch in “Architecture”
- **ԼՈՒԶԻԱ ՊՇՏԻԿԵԱՆ** (2015-ի շրջ.) LIU BBA in “Business Management”
- **ԼԻԼԱ ՕՀԱՆԵԱՆ** (2016-ի շրջ.) HU BBA in “Marketing”
- **ՄՀԵՐ ԿՈՐԱՐԵԱՆ** (2013-ի շրջ.) AUB MS & TD in “Physics”

ԱՊԱՔԻՆՈՒՄ

Երկարամեայ նախկին աշակերտ, դպրոցի բարերարներեն՝ փարիզաբնակ Հրաչ Միսեռեան, Մարտի վերջերուն վարակուած է Covid 19 հիւանդութեամբ, բայց յաղթահարած է զայն ու այժմ կը գտնուի ապաքինման մէջ:

Կատարեալ առողջութիւն կը մաղթենք պարոն Միսեռեանին:

ՆՈՒԻՐԱՏԻՈՒԹԻՒՆՆԵՐ ԵՎ ՅԱՏԿԱՑՈՒՄՆԵՐ

«ԼՐԱՏՈՒ»-ի նախորդ թիւէն ի վեր ՀԱԳ-ին եղած են հետեւեալ նուիրատւութիւնները:

Տիկ. Սօսի Պալեան, պր. Արմէն Պալեան եւ դոկտ. Արաքս Պալեան-Գրիգորեան _____ 300,000 Լ.Ն.

Տէր եւ տիկին Ալի եւ Մունա ալ Օմէյրի *իրենց զաւկին՝ Հիւսէյնի շրջանաւարտութեան առթիւ* _____ 100 ամ. տոլար

ՀԱԳ-ի տնօրէնութիւն, ուսուցչակազմ եւ պաշտօնէութիւն *տիկին Վեհան Պեղիբեանի մահուան առթիւ* _____ 100,000 Լ.Ն.

Սթիւըն Փիլիպոսեան ֆոնտ _____ 11,961 ամ. տոլար
Ամերիկայի հայ աւետարանչական ընկերակցութիւն _____ 1763 ամ. տոլար

Մարաշի հայրենակցական միութիւն _____ 1,200,000 Լ.Ն.

Տիկին Լենա Գարակէօզեան-Իւրնէշլեան _____ 500,000 Լ.Ն.

Վեր. եւ տիկին Հրայր Զոլագեան _____ 50,000 Լ.Ն.

Տիկ. Շանթալ Արաքսէիսեան-Մեթնի (2008 շրջ.) _____ 500,000 Լ.Ն.

Մի ոմն _____ 250,000 Լ.Ն.

Օրդ. Վարդուկ Ֆոնըզլեան _____ 200,000 Լ.Ն.

Տիկ. Մարինէ Գարայեան _____ 150,000 Լ.Ն.

Աստուած օրհնէ բոլոր բարեգործութիւնները, որոնք կը ծառայեն իր անուան փառքին՝ ՀԱԳ-ի առաքելութեան ընդմէջէն:



Խմբագիր՝ ՏԵՐԵՆ ՊՈՎՏ. ԱՐՄԵՆ ԻՐԱՆԵՇԼԵԱՆ
Խորհրդատուներ՝ ՏԻՐ ՆԵՐՍԵՆ ՊԱՐՏՈՅԵԱՆ
ՏԻՐ ՅԱԿՈԲ ՏԵՐԻՐՃԵԱՆ
Էջաղրու՝ ԱՆԻ ԲԵՏԵՆԵԱՆ-ՊԱՍԵՐ
Մ.Ա.Յ.Ա.Ե. ՄԻՈՒԹԵԱՆ ԶԵՆԱԳՐԱԳՈՎԱԿԱՆ ԳՐԱՏԵՆԵԱԿ

Y.M. PHILIBOSSIAN ARMENIAN EVANGELICAL COLLEGE

P.O. Box 3672-Beirut

Tel: 01 349 816 Fax: 01 751 469

E-mail: A_E_C@cyberia.net.lb

Website: aecbeirut.edu.lb

Facebook: Armenian Evangelical College